

ՇՈՒՇԻ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Շուշի բնակավայրը, որը վաղ միջնադարում կոչվել է Շիկաքար, ուշ միջնադարյան աղբյուրներում՝ նաև Քար, Քարագլուխ, Քարագլխի բերդ, Քարագլխի սղնախ, հաճախ նաև՝ Շոշի բերդ, Շոշի սղնախ, որովհետև թշնամի ուժերի հարձակումների ժամանակ այնտեղ պատսպարվել է հարևան Շոշ ավանի և գավառի բնակչությունը, հիմնադրվել է 1720-ական թվականներին պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա կամ Մյուս Հաբանդ գավառի հյուսիսային ծայրում¹ Կարկառ գետի ձախ ափին:

Շուշի բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին պատմության մեջ տարածայնություններ գոյություն ունեն: Կարծիքներ կան, որ Շուշին հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին, սակայն կան նաև 18-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող կարծիքներ: Այսպես, Պ. Չոբանյանը գտնում է, որ Շուշի բերդի մասին գրավոր աղբյուրները վերաբերում են 18-րդ դարի սկզբին²: Մ. Սարգսյանը հայտնում է այն կարծիքը, որ «առաջմ ստույգ պարզված չէ, թե մինչև 18-րդ դարի սկիզբը այստեղ բնակավայր գոյություն է ունեցել, թե ոչ»³: ըստ Լեոյի Շուշին հիմնվել է 1750-1752 թվականներին⁴, ըստ նրա մյուս աշխատության⁵՝ 1752-1754 թվականներին, ըստ Միրզա-Ջամալ Ջիվանշիրի⁶ և Միրզա Ադիգյոզալ Բեկի⁷՝ 1756-57 թթ. և այլն:

¹ Ղ. Ալիշան, Արցախ, Ե., 1993, էջ 92:

² ՊԲՀ, 1994, ք.1-2, էջ 184:

³ **М. Саркисян**, Из история градостроительства Шуши, Ереван, стр. 4.

⁴ **Լեո**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 59:

⁵ **Լեո**, Պատմություն հայոց, հ. 3, Ե., 1946:

⁶ **Միրզա-Ջամալ Ջիվանշիր**, Ղարաբաղի պատմություն, Բաքու, 1959:

⁷ **Мирза Адигезалыбек Карабахский**, История Карабаха, Баку, 1950 г.

Ս. Սարգսյանը իր «Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ»¹ գրքում այն կարծիքն է հայտնում, որ Շուշին միջնադարյան աղբյուրներում հիշատակվող նշանավոր Կարկառ ամրոց-բնակավայրն է, հիմնավորելով այն Կ. Գանձակեցու² հաղորդած «1246 թվականին մոնղոլ զորապետ Բաթուի և նրա որդի Սարթախի մոտ մեկնած Խաչենի Յասան Ջալալ իշխանից թուրքերի կողմից խլված հայրենական կալվածքներ՝ Չարաբերդը, Ականան ու Կարկառը, վերադարձնելու» մասին տեղեկություններով: Ս. Սարգսյանը արաբական աղբյուրների, մասնավորապես Յակուտ ալ-Խամավիի (1178-1229)³ հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ ըստ որի «Կարկառը քաղաք է Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի (531-578 թթ.) կողմից», գտնում է, որ Կարկառ ասելով աշխարհագետը նկատի է ունեցել Շուշին, բայց «հեռու հայացքով», որը հատկանշական է օտար ուսումնասիրողներին⁴: Ուստի և, Ս. Սարգսյանը նշում է, որ ինչպես վկայում են բազմաթիվ փաստերը, Կարկառը Անուշիրվանից, այսինքն 6-րդ դարից առնվազն 600-700 տարի առաջ էլ գոյություն ուներ: Այդ է վկայում Աղրբեջանի նախարարների խորհրդի՝ 1968 թ. ապրիլի 2-ի թիվ 140 որոշմամբ հաստատված հուշարձանների ցուցակը, համաձայն որի, Շուշիում (հյուսիս-արևմուտք) եղել են մի շարք ք. ա. 2-1-ին հազարամյակի հնագիտական հուշարձաններ (դամբարան, կուրգան), որոնց գտնվելու վայրը ներկայումս դժվար է ճշտորոշել⁵:

Կարկառ-Շուշիին անդրադարձել են նաև Իբն Խորդաբեդեն ու Իբն-Ֆակիհը⁶ (10-րդ դ.) բնակավայրի հիմնադրումը վերագրելով Անուշիրվանին, Յամդալլահ Ղազվինին⁷ (1281-1349), նշելով, որ «Կարկառը առևտրական քաղաք է...», ինչպես նաև Ջալալ-ադ-դին սուլթանի անձ-

¹ Ս. Սարգսյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Ե., 1996, էջ 47:

² Կ. Գանձակեցի, Յայոց պատմություն, Ե., 1982, էջ 258:

³ Յակուտ ալ-Խամավի, Արաբական աղբյուրները Յայաստանի և հարևան երկրների մասին, Ե., 1965, էջ 103:

⁴ Ս. Սարգսյան, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 151:

⁵ Տես՝ նույն տեղը, էջ 152-153:

⁶ *Ибн Хордабэдэ*, Книга путей и царств, СМОМПК, XXXII, Тифлис, 1902, стр. 15: *Ибн-ал-факих*. - СМОМПК, XXXI, Тифлис, 1902, стр. 15: Տես՝ նույն տեղը, էջ 153:

⁷ *Хамдаллах Казвини*, Нузхат ал-Кулуб, Баку, 1983, стр. 50-51.

նական քարտուղար Շիխաբ ադ-Դին ան-Նասավին¹ (13 դ.), որն ամրոցին «Կալադարա» անունն է տալիս և ուրիշներ:

Բացի այս տեղեկություններից Շուշիի տարածքում հայտնաբերված Ք. ա. 14-13-րդ դդ. խեցեգործական ու քարե կենցաղային առարկաները վկայում են, որ դեռևս վաղ անցյալում այստեղ եղել է ամրոց-բնակատեղի²: 1981 թ. այստեղ հայտնաբերվել են 971 թ., 1252 թ. և այլ թվականների խաչքարեր³:

Աղբյուրագիտական այդ տվյալները վկայում են, որ Շուշին մինչև 18-րդ դարն էլ նշանավոր քաղաք է եղել, որով միաժամանակ հերքվում է աղբրեջանցի պատմաբանների այն թյուր կարծիքը, համաձայն որի Շուշիի բերդի հիմնադիր է համարվում Փանահ Ալի խանը: Մի բան պարզ է, որ Շուշին գոյություն է ունեցել Փանահ-խանից առաջ՝ սկզբում որպես գյուղական բնակավայր, իսկ Ավան հարյուրապետի ժամանակ որպես բերդ կամ բերդաքաղաք:

Առանձնացած սարահարթում, կավախառն ու պատռված անառիկ ու անմատույց ժայռոտ տեղում (բացի քաղաքի երևանյան և գանձակյան կողմերից, որոնք էլ ամրացված են աշտարակներով, բարձրավանդակի փոքր մասում բերդաքաղաքն է, իսկ մեծագույն մասում՝ գերեզմաններն ու պարտեզները), Քիրսի հյուսիսային հեռավոր փեշերի վրա՝ երեք կողմերից անդնդախոր ձորերով պատված, «Չըրբերդի, Վարանդինի և Ջանգեզուրի սահմանամիջում, ամբողջ Առանի, այսինքն Ղարաբաղի գլուխը», ինչպես նշում է Ղ. Ալիշանը⁴, կազմող ամուր քարաշերտերով կռած ու կերտած՝ որպես ձուլվածք, բարձրանում է մի հսկա քարակոփ սարահարթ, որին ամբողջ Ղարաբաղը Ղալա էր կոչում, ամրոց-բերդ, ուր բազմած Շուշին որպես սրաթև արծիվ, մի առանձին հպարտությամբ իշխում է իր ողջ շրջակայքի վրա:

Բնական անմատչելի դիրքի շնորհիվ Շուշին ինչպես հնագույն ժամանակներում Վարանդա գավառի հայ բնակիչների համար, այնպես էլ

¹ **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, стр. 278: Տես՝ **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 153:

² Գ. Զանրագիտարան, Երևան, 2004, էջ 525:

³ **Շ. Սկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 209:

⁴ **Ղ. Ալիշան**, Արցախ, Ե., 1993, էջ 108:

հետագա իր գոյության շրջանում մինչև մեր օրերը, ժառայել է իբրև պաշտպանական ամրություն: Շուշին առաջին անգամ տեսնողը բացականշում է «Պատերազմների և սխրագործությունների մեջ փառք որոնող, այդպիսի մի մարդ էլ դրել է այդ քաղաքի հիմքը»: Եվ այդպես է. 9-րդ դարի կեսին իշխան Սահլ Սմբատյանը հաղթել է այստեղ արաբական ասպատակիչ զորքին և ազատագրել գերեվարված հայ բնակչությանը:

Շուշին տեղադրված է ծովի մակերևույթից 1238-1533 մ բարձրություն ունեցող լեռան վրա, լեռ, որը հարավ-արևմուտքից արևելահյուսիս տարածվելով՝ հետզհետե ցածրանում է և ներքին մասում բավական հարթ տարածություն կազմում, մինչդեռ հարավ-արևմտյան կողմում գտնվում է լեռան սեռը: Լեռան հարավային կողմում տարածվում է մի անդնդախոր ձոր, որի միջով հոսում է Քարին-տակի գետակը: Այս մասում լեռը սաստիկ ժայռոտ և ուղղահայաց է: Նմանապես և հյուսիսային կողմը մի խոր ձոր է, որի միջով հոսում է Ղայթալու գետակը: «Ամբողջ քաղաքը,- ինչպես գտնում էր Ե. Ջալալյանը,- բռնում է մոտավորապես 3-4 քառակուսի վերստ տարածություն, որը կտրատվում է մի քանի մանր և երեք մեծ, հարավից հյուսիս տարածվող ձորակներով, որոնց միջով հոսում է անձրևի ջուրը, տանելով իր հետ քաղաքի անմաքրությունները»¹: Քաղաքը բաժանված էր երկու գլխավոր մասի՝ հայոց և թուրքերի թաղի: Հայոց թաղը գտնվում էր քաղաքի վերին մասում, իսկ թուրքերինը՝ ներքևում:

Նրա փողոցները, որ կառուցվել են 18-19-րդ դարի ճարտարապետների գծած հատակագծով, այդպես էլ մնում են նեղ: Քաղաքն ունեցել է երկու գլխավոր դարպաս՝ «Վերին դարպաս» (Երևանյան) ու «Ստորին դարպաս» (Գանձակի): Երկու դարպասներն իրար հետ կապված էին նեղ փողոցով ու հազիվ երկու սայլ էին անցնում²:

Մթության մեջ Շուշիի գլխավոր փողոցները լուսավորում էին 172 լապտերներ: Շուշիում կար 4 եկեղեցի և մեկ կուսանաց մենաստան: ճարտարապետական տեսակետից բոլորից գեղեցիկն ու նշանավորը բյուզանդական ոճով շինված, խաչաձև հատակագիծ ունեցող Ղազան-

¹ Ե. Ջալալյան, Արցախ, թիվ 2, էջ 24:

² Հ. Հարությունյան, Շուշի, Ստեփանակերտ, 2002, էջ 6:

չեցոց ս. Ամենափրկիչ մայր եկեղեցի¹ է: Եկեղեցին գործել է մինչև 1930 թվականը, մասամբ վերանորոգվել է 1981-1988 թթ.՝ մշեցի վերականգնող վարդապետ Վ. Բաբայանի ջանքերով: 1988 թ. Շուշիի հայերին տեղահանելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների խորաքանդակները: 1988 թ. ավարտվել է եկեղեցու ու զանգակատան նորոգումը և մեծ հանդիսությամբ օծվել հուլիսի 19-ին, որպես հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդանիստ՝ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի առաջնորդությամբ:

Եթե իր գոյության առաջին շրջանում Շուշին համեստ բնակավայր էր եղել, ապա 18-րդ դարի 50-ական թվականներից սկսվում է նրա պատմական դերի բարձրացման ժամանակաշրջանը:

1750-ական թվականներին Վարանդայի մելիքությանն ուխտադրժոբեն տիրացած Շահնագար Բ, իր դեմ միավորված Ղարաբաղի մյուս չորս մելիքություններին դիմադրելու համար, դաշնակցել է «սարը-ջալու» կոչվող վաչկատուն ցեղի առաջնորդ, աշխարհակալական ձգտումներով տոգորված Փանահ խանի հետ և 1752 թվականին նրան տրամադրել Շոշի բերդը: Փանահ խանը Մելիք Շահնագարի աջակցությամբ այժմյան Շուշիի տեղում այդ բնական ամրությունների վրա, գլխավորապես հյուսիս և արևելյան կողմերից, նոր արհեստական պարիսպներ կառուցելով (առաջին բերդապարիսպները 1724 թ. հիմնել է Ավան հարյուրապետը) և այն դարձնելով իր ամրոց նստավայրը՝ Փանահաբադ, նպատակ դրեց կռվի միջոցով ձեռք ձգել Ղարաբաղի հայ մելիքների կալվածքներին: Նա Փանահաբադը բնակեցրեց ինչպես իր ցեղակիցներով, այնպես էլ հարևան հայկական գյուղերից տեղափոխված շինականներով ու արհեստավորներով: Փանահ խանը իրեն Ղարաբաղի տեր հռչակելով խարխլել է հայ մելիքությունների միասնությունը, ջլատել նրանց ուժերը: Նրա հաջորդ Իբրահիմ խանը իր տիրապետությունը տարածելով Ղարաբաղի և Սյունիքի մելիքությունների վրա և սերտ կապեր հաստատելով օսմանյան սուլթանության հետ, ամեն կերպ աշխատել է խափանել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսական կայսությանը:

Շուշին աթոռանիստ քաղաք լինելով, զարգանում է նաև որպես վարչական, առևտրական և արհեստավորական կենտրոն: Շուշին աս-

¹ Ե. Լալայան, հ. 2, էջ 27:

տիճանաբար պատկառելի դիրք է գրավում Անդրկովկասի այլ քաղաքների շարքում:

19-րդ սկզբին Շուշին դարձել է ռուս-պարսկական պատերազմների ռազմաբեմ: 1805 թ. Ղարաբաղը Ռուսաստանին միացվելուց հետո Շուշին ձեռք է բերել կայուն խաղաղություն, տնտեսական ու մշակութային զարգացման մեծ հնարավորություններ: Ստեղծվել են արհեստագործական բազմաթիվ ընկերություններ: Շուշին ուներ ավելի շատ բնակիչներ, քան Բաքուն: 1862-1863 թթ. մարդահամարի տվյալներով Բաքվում բնակվում էր 14897 մարդ, Շուշիում՝ 19659: Հետագա տարիներին ևս աճում է Շուշիի և ընդհանրապես Ղարաբաղի բնակչությունը: 1904-1913 թթ. Շուշիի բնակիչների թիվը 33100-ից հասնում է 42700 մարդու¹:

19-րդ դարի կեսերից սկսած՝ Ղարաբաղի բնակչության (այդ թվում և Շուշիի) աճին մեծապես նպաստում էր վաճառականական աշխույժ եռուզեռը: Շուշիում կային առևտրական մեծ տներ, որոնք սեփական խանութներից բացի, առևտրական կապերի մեջ էին ոչ միայն Ռուսաստանի, այլև արտասահմանի նշանավոր քաղաքների հետ: Շուշիի գորգագործների ու նորաբաց մետաքսագործական ֆաբրիկաների արտադրանքները տարածվել են այդ կենտրոնների շուկաներում: Շուշեցիները հաճախ էին երևում Թավրիզում, անգլիական և ֆրանսիական շուկաներում:

Շուշու վաճառականական դասը գերիշխող դեր ուներ Ղարաբաղում: Շուշին իջևան էր դարձել նաև ոչ Ղարաբաղցի վաճառականների համար: Այստեղ էին գալիս ու այստեղով գնում Ռուսաստանի և արտասահմանի շատ առևտրականներ:

Շատ շատերն են հիացել Ղարաբաղով, մասնավորապես՝ Շուշիով: Այստեղ այցելել են մեծահամբավ հայ, օտարազգի գիտնականներ: Շուշու մասին գրած հուշերում բացառիկ ջերմությամբ է խոսում Հր. Աճառյանը. «Երբ բարձրանում ես բարձունքի գլուխը, որ տեղական բարբառով «քերծ» կամ «քերծեր» է կոչվում, առաջդ բացվում է հոյակապ մի տեսարան: Աջդ, ձախդ և հետևդ բարձր բլուրներ են, ծածկված կարճահասակ անտառներով, որոնք սև գույն ունեն և սրա համար էլ երկիրը կոչվել է Ղարաբաղ, այսինքն՝ «սև այգի»²:

¹ Ավագյան Ս. Ղ., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Ե., 1989, էջ 3-4:

² Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Ե., 1967, էջ 254:

1850-80-ական թվականներին գործել են մետաքսագործական ֆաբրիկա, էլեկտրակայան, 4 կաշեգործական արհեստանոցներ, 3 ներկատուն, 4 տպարան, հիվանդանոց, 5 իջևանատուն-հյուրանոց, 185 խանութ¹:

19-րդ դ. երկրորդ կեսից Շուշին դառնում է հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը: Ցարական ինքնակալության դաժան պայմաններում էլ լուսավոր միտքը հետզհետե ընդգրկում է նոր ոլորտներ: 1874-1920 թթ. գավառում հրատարակված պարբերականների թիվը հասնում էր 21-ի (19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն):

1827 թվականից Շուշիում արդեն գործում էին և՛ տպարանը և՛ ուսումնարանը: (Առաջին գիրքը «Պատմություն Սուրբ Գրոցն» էր (հրատ. 1828 թ.):)

Սակայն 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Շուշի քաղաքը, զգալի չափով կորցնելով իր տեսակարար կշիռը Անդրկովկասում և Ղարաբաղում հասնում է լիակատար անկման: 1905-1906 թվականներին հայ-ադրբեջանական (թաթարական) ազգամիջյան ընդհարումներն ու 1918-1920 թթ. արյունոտ դեպքերը հասցնում են Շուշի քաղաքի հայկական մասի լիակատար ավերմանը, Շուշին դատարկվում, քայքայվում և անճանաչելի է դառնում:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատվելու նախօրյակին Շուշին դարձել է ազգամիջյան արյունահեղ բախումների թատերաբեմ:

1905-1906 թթ., 1920 թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձություններով, երբ թուրք-ադրբեջանական հրոսակների կողմից կազմակերպվեց հայ բնակչության կոտորածն ու Շուշին մատնվեց հրդեհի, ամբողջ մեկ դար տևած մշակութային և տնտեսական աննախադեպ վերելքն ընդհատվեց:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելու նախօրյակին Շուշին դարձել էր ազգամիջյան արյունահեղ բախումների թատերաբեմ: 1920 թ. մարտին Շուշի ժամանած թուրքական զորապետներ Նուրի և Խալիլ փաշաները, տեղի մուսավաթական կառավարիչ Խոսրով-Բեկ Սուլթանովի ու նրա կուսակիցների հետ հրդեհել են քա-

¹ ՀՀ Հանրագիտարան, Ե., էջ 526:

ղաքի հայկական թաղամասը (շուրջ 7 հազար տուն), կոտորել հայ բնակչության մեծ մասին (35 հազար), կողոպտել ունեցվածքը:

1921 թ. հուլիսի 5-ին Շուշին Լեռնային Ղարաբաղի կազմում ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ հանձնվել է Ադրբեջանին:

ԼՂԻՄ-ի կազմավորումից (1923 թ. հուլիս 7) հետո ադրբեջանական իշխանությունները երկրամասի կենտրոն են դարձրել Վարարակնը՝ Ստեփանակերտը:

Թվում էր, խորհրդային կարգերի ժամանակ Շուշին կհայանար, կկարողանար բուժել իր վերքերը և վերստին կենդանություն առնել: Սակայն նույն խորհրդային կարգերի ժամանակ Շուշիում մոլեգնել էր մի նոր բարբարոսություն, որին զոհ գնացին քաղաքի հայկական չորս գերեզմանատներն իրենց փառաշուք շիրմաքարերով, խաչքար-կոթողներով:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին Շուշին զգալի անկում է ապրում: Եթե 1921 թ. Շուշիում բնակվել էր 9223, 1923 թ.՝ 6976, 1925 թ.՝ 5000, ապա, 1920-ական թվականների վերջերին այդտեղ բնակվում էր 3000 մարդ (գերազանցապես ադրբեջանցիներ): 1960-ական թվականների սկզբին ադրբեջանական իշխանությունները հիմնականում հայկական թաղամասի ավերակների վրա ձեռնարկել են Շուշիի նոր կառուցապատումը՝ ոչնչացնելով դեռևս կանգուն մնացած հայկական և ռուսական (միակ) եկեղեցիները:

1966 թ. փետրվարի 2-ի «Շինարար» (ռուսերեն) թերթի համարում ճարտարապետ մի ոմն Ք. Սեիդով «խորհուրդ էր տալիս» Շուշվա թրքությանը փրկել գերեզմանական շրջապատից, բարձրաձայն կոչելով, որ «մեռածները կերան սաղեղին»: Նման գործողությունները շարունակական բնույթ էին ստացել:

Ողբերգական իրադարձությունները կրկնվեցին 1988 թվականից սկսված արցախյան շարժման հետ: Ղարաբաղի հայերն իրենց քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ հերոսական պայքար մղեցին Շուշիի համար: Եվ այդ պայքարով գրվեց հայ ազատագրական պայքարի պատմության փառավոր էջերից մեկը:

Տարիների ընթացքում քաղաքը գրեթե լիովին հայաթափվել էր և դարձել ադրբեջանաբնակ: Իշխող դիրք գրավելով Ստեփանակերտի նկատմամբ, որտեղից երկու տարի շարունակ ուղիղ նշանառությամբ մահաբեր արկեր էին թափվում Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի

վրա 1992 թ. մայիսի 7-ի գիշերը Արցախի ազատամարտիկները կռվակոչի ահազանգին ելած սկսեցին Շուշիի գրոհը: Մայիսի 7-8-ի կատաղի մարտերից հետո, մայիսի 9-ի առավոտյան ազատագրվեց հայոց հինավուրց քաղաքը և ամրացվեց հայոց դրոշը: Շուշիի ազատագրումը արցախահայության համար քաղաքական, ռազմավարական և բարոյահոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ: Շուշին-Քարազլուխը՝ բոլոր լրատվական մարմինների ականա խոստովանությամբ՝ ադրբեջանական կողմի վերջին հենակետն էր Լեռնային Ղարաբաղում, Շուշիի ազատագրումը Արցախի ազգային-ազատագրական շարժման նոր փուլի սկիզբը դրեց:

Ազատագրումից հետո Շուշիում բնակություն են հաստատել ԼՂՀ տարբեր վայրերից բռնագաղթված հայեր: Շուշիի մուտքի մոտ կանգնեցվել են քաղաքի ազատագրման մարտերում խփված տանկի («Տանկ-հուշարձանը»), զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար, քաղաքում՝ Վ. Սարգսյանի հուշարձանը:

Շուշիի ազատագրումից հետո քաղաքում գործում են 2 միջնակարգ, 1 երաժշտական (1992 թ. նոյեմբերից) դպրոցներ, շրջանային կենտրոնական գրադարան (1993 թ. սեպտեմբերի 1-ից), պատմաերկրագիտական թանգարան (1992 թ.), պատկերասրահ (1995 թ.), մանկապատանեկան թատերախումբ, «Վարանդա» երգչախումբը, հրատարակվում է «Շուշի» թերթը և այլն:

Այսօր Շուշին, որը հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակից է Ասկերանի, հարավ-արևելքից՝ Չադրութի, արևմուտքից և հարավ-արևմուտքից՝ Քաշաթաղի շրջաններին ունի յոթ համայնք, ինն գյուղական բնակավայր և 5300 բնակչություն (2003 թվականի դրությամբ):